Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 3(51), նոյեմբեր, 41-55
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.3.041

ՀԵՏՄՈԴԵՌՆԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱԺԱՍԱՆԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ. ԱՌՕՐՅԱ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՎԱԾ ԽԱՐԻՍԽՆԵՐԸ

ԱՐՓԻՆԵ ԱՅՎԱԶՅԱՆ*
Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննվում է հետարդիական թվայնացման և տեխնոլոգիական գերարագացման ազդեցությամբ առօրյա տարածության ու ժամանակի կրած արմատական էկզիստենցիալ տրոհումը: Ավանդական կենսաշխարհի խարսխվածությունը, որն ապահովում էր անձի գոյաբանական արմատավորումն ու ներքին տևողականությունը, ժամանակակից իրականության մեջ փոխարինվում է վիրտուալացմամբ, անդեմ տարանցիկ տիրույթներով և պատառիկավորված «հոգեջլատված (շիզոֆրենիկ)» ժամանակով: Հետազոտությունը խորքային կերպով բացահայտում է, թե ինչպես է ներքին տարածաժամանակային ներդաշնակ զսպանակի փլուզումը ծնում «կաղրակենտրոն կյանքի» ֆենոմենը, որտեղ անհատը իրականությունն իմաստավորված ապրելու փոխարեն տենդագին սպառում է դրա սիմուլյատիվ, էկրանային պատկերը: Այս համատեքստում վերլուծվում են դասական քաղաքային դիտորդի փոխակերպումը մակերեսային զբոսաշրջիկի կամ անարմատ թափառաշրջիկի, թվային տիրույթում գեղագիտական կատարյալ դիմակի կերտումը՝ ի հաշիվ ներքին հոգևոր սնանկության, ինչպես նաև մարմնի ժամանակային «ախտահանումն» ու արվեստի ինքնաոչնչացվող վաղանցիկացումը: Ցույց է տրվում, որ տեխնոլոգիական արագությունը դատարկում է վճռորոշ ակնթարթի էկզիստենցիալ խտությունը՝ առօրեականությունը վերածելով հոսող ու անորոշ ունայնության: Եզրահանգում է արվում, որ այս տարածաժամանակային քաոսում առօրյան դադարում է լինել կեցության պասիվ հարթակ. այն վերածվում է բարդ էկզիստենցիալ նախագծի, որտեղ ժամանակակից մարդուց պահանջվում է գիտակցված ջանք՝ սեփական կենսաշխարհի փլատակների միջից սուբյեկտիվության կայուն կղզյակներ և սեփական ինքնության խարիսխներ կերտելու համար:

Բանալի բառեր – *առօրեականություն, հետարդիականություն, ժամանակ, տարածություն, էկզիստենցիալ տրոհում, վիրտուալացում, «ոչ-տեղեր», հոսող արդիականություն, կաղրակենտրոն առօրյա, կենսաշխարհ*

* **Արփինե Այվազյան** – ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի ասպիրանտ
Арпине Айвазян – Аспирант кафедры социальной философии, этики и эстетики ЕГУ
Arpine Ayvazyan – PhD Student at the Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics of YSU
arpine.ayvazyan@ysu.am ORCID ID: https://orcid.org/0009-0005-7260-772X

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 10.09.2026
Գրախոսվել է՝ 16.09.2026
Հաստատվել է՝ 03.11.2026
© The Author(s) 2026

Ավանդական փիլիսոփայական հայեցակարգերում առօրյա տարածությունը մշտապես ընկալվել է որպես անձի «արմատավորման», տնայնացման և ապահովության վայր: Հայդեգերյան «բնակվելու» (Wohnen) կամ հուսերլյան «կենսաշխարհի» (Lebenswelt) տեսանկյունից տարածությունն ունի հստակ կենտրոն՝ մարմինը կամ տունը, որտեղից սկսվում է աշխարհի իմաստավորումը: Սակայն հետարդիական իրականությունը հիմնովին խարխլում է այս տարածական կայունությունը: Ֆիզիկական տեղն այլևս չի երաշխավորում էկզիստենցիալ ներկայություն, քանի որ առօրյա տարածությունը ենթարկվում է սիմուլյացիայի և վիրտուալացման գործընթացներին:

Այսօր առօրյա միջավայրն այլևս կազմված չէ իրական, նպատակահարմար առարկաներից, այլ լեցուն է նշաններով, պատկերներով և կոդերով: Ժամանակակից տունը դադարում է լինել արտաքին աշխարհից անջատված գողտրիկ ապաստան. էկրանների, սմարթֆոնների և մշտական հասանելիության շնորհիվ արտաքին աշխարհի տեղեկատվական ու տեսողական հոսքերը ներխուժում են անձնական տիրույթ՝ լուծարելով ներսի և դրսի սահմանը: Տարածությունը վերածվում է գերիրականության, որտեղ վիրտուալ փորձն ավելի ուժգին է ու իրական, քան ֆիզիկական պատերի ներսում գտնվելու փաստը: Անհատը կարող է ֆիզիկապես գտնվել սեփական սենյակում, սակայն նրա էկզիստենցիալ և առօրյա ուղղվածությունը (ինտենցիոնալությունը) հազարավոր կիլոմետրեր հեռու՝ սփռված թվային հարթակներում:

Այս տեղահանման գործընթացն ունի նաև իր սոցիալ-մշակութային հստակ աշխարհագրությունը, որը ֆրանսիացի մարդաբան Մարկ Օժեն անվանում է «ոչ-տեղեր» (non-places)[1]: Եթե ավանդական առօրյան անցնում էր պատմական, նշանակալից և ինքնություն ձևավորող վայրերում, ապա հետարդիական մարդու կյանքի զգալի մասը կլանված է անդեմ, տարանցիկ տարածություններիի կողմից (առևտրի կենտրոններ, օդանավակայաններ, սուպերմարկետներ, արագ սննդի կետեր և մետրոպոլիտեն): Սրանք տարածքներ են, որոնք զուրկ են պատմական հիշողությունից և անհատական հարաբերություններից. դրանցում մարդը հանդես է գալիս ոչ թե որպես յուրահատուկ սուբյեկտ, այլ որպես անանուն սպառող կամ ուղևոր: Առօրյա տարածության այսօրինակ «անանունացումը» և միատեսակացումը տեղային ինքնության կորստի և էկզիստենցիալ օտարման պատճառ են դառնում, երբ նույնիսկ ամենասովորական աշխարհագրական միջավայրը թվում է ժամանակավոր և անկայուն:

Տարածական սահմանների հեղուկացմանը զուգահեռ՝ հետարդիական փոխակերպումը արմատապես վերակառուցում է նաև առօրեականության ժամանակային կազմվածքը: Արդի դարաշրջանին բնորոշ գծային և կանխատեսելի ժամանակը, որը հենվում էր աշխատանքային ռիթմերի, կայուն սովո-

[1] Տե՛ս **Augé M.**, Non-Places: Introduction to an Anthropology of Supermodernity, translated by J. Howe, London, New York: Verso, 1995, էջ 71-115:

րույթների և ապագայի հստակ նախագծերի վրա, հետարդիականության դարաշրջանում փոխարինվում է պատառիկավորված ժամանակով: Առօրյա ժամանակն այլևս չի հոսում որպես մեկ միասնական գետ. այն տրոհվում է առանձին, իրարից անջատված ակնթարթների հարահոսի:

Այս երևույթի ամենախորը վերլուծություններից մեկն առաջարկում է ամերիկացի տեսաբան Ֆրեդրիկ Ջեյմսոնը՝ օգտագործելով առօրյա ժամանակի «հոգեջլատված» բնույթի փոխաբերությունը[2]: Լականյան հոգեվերլուծության լույսի ներքո Ջեյմսոնը ժամանակի ընկալումը կապում է լեզվական շղթայի հետ. ինչպես նախադասության իմաստը ծնվում է բառերի հաջորդական կապից, այնպես էլ էկզիստենցիալ ժամանակի իմաստը ձևավորվում է անցյալի, ներկայի և ապագայի կապակցվածության մեջ: Հետարդիական առօրյան, սակայն, խզում է այս շղթան: Տեղեկատվական հեղեղի, սոցիալական ցանցերի լրահոսերի և անընդհատ թարմացվող կարճ տեսողական պատկերների ազդեցությամբ անհատը կորցնում է անցյալի փորձը ապագայի երկարաժամկետ պլանների հետ կապելու ունակությունը: «Ներկան այնքան արագ է փոխվում, որ դառնում է **չապրված** անցյալ»[3]: Առօրյա ժամանակը կլանվում է մեկուսացված, մշտապես կրկնվող, բայց ներքին կապից զուրկ «ներկաների» շարանում, ինչը հանգեցնում է ակնթարթի մեջ կորսվելու զգացողության և էկզիստենցիալ տագնապի:

Առօրյա ժամանակի այսպիսի տրոհումն անխզելիորեն կապված է տեխնոլոգիական այն արագացման հետ, որը Պոլ Վիրիլիոն անվանում է դրոմոլոգիա (գիտություն արագության մասին)[4]: Տեղեկատվության և հաղորդակցության ակնթարթային բնույթը սեղմում է առօրյա ժամանակը՝ դուրս մղելով այնպիսի կարևոր էկզիստենցիալ դադարներ, ինչպիսիք են սպասումը և տևողությունը (durée): Ժամանակակից առօրյայում ամեն ինչ պետք է տեղի ունենա «հիմա և անմիջապես»: «Նվազում է որևէ երկարաժամկետ, ապահով և հուսալի կարգավիճակում մարդու գոյության հավանականությունը: Կյանքի վազքուղուց դուրս չմնալու ամենօրյա մտահոգությունը ստիպում է, որ սոցիալական ճկունությունը դառնա կենսագործունեության գլխավոր սոցիոմշակութային նախապայման»[5]: Արդյունքում՝ աշխատանքային ժամանակը ներխուժում է անձնական, հանգստի կամ ստեղծագործական ժամանակի տիրույթ (հեռավար աշխատանքի, մշտական հասանելիության պատճառով)՝ ջնջելով օրվա ա-

---

[2] Տե՛ս **Jameson, F.**, Postmodernism, or, The Cultural Logic of Late Capitalism, Durham: Duke University Press, 1991, էջ 25–49:

[3] **Հարությունյան Է.**, Համատեքստի հերթափոխը՝ մարդկային կեցության սոցիոմշակութային այլատեսակությունների ապականումը // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 7(1), 2016, էջ 15:

[4] Տե՛ս **Virilio, P.**, Vitesse et Politique: essai de dromologie, Paris: Éditions Galilée, 1977, էջ 35–58:

[5] **Սողոմոնյան Գ.,** Անհապաղը որպես արդիականության կառուցարկման սոցիոմշակութային ֆենոմեն // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 4(1), 2013, էջ 10:

վանդական կառուցվածքը: Նախորդ դարաշրջաններին բնորոշ աշխատանքային և անձնական ժամանակի հստակ տարանջատումը, որն ուներ նաև իր ֆիզիկական տարածական սահմանները (գրասենյակ/գործարան ընդդեմ տան), հետարդիական թվային առօրյայում ամբողջությամբ լուծարվում է: Սմարթֆոնն ու համակարգիչը տունը դարձնում են թափանցիկ. աշխատանքային էլեկտրոնային նամակները, ծանուցումներն ու հրատապ հաղորդագրությունները ներխուժում են անձնական տիրույթ օրվա ցանկացած ժամի՝ ջնջելով հանգստի և ինքնանդրադարձի համար նախատեսված սրբազան ժամանակը: Օրվա ավանդական կառուցվածքի այսպիսի ջնջումը հանգեցնում է նրան, որ շրջափուլային ժամանակի բնականոն կենսաբանական ռիթմերը խաթարվում են: Առօրյա ժամանակն այլևս չի պատկանում մարդու սուբյեկտիվ ռիթմերին. այն թելադրվում է գլոբալ ցանցերի ալգորիթմներով, ինչի պատճառով անհատը դառնում է իր իսկ արագացված առօրյայի պասիվ սպառողը: Կոտրվում է մեր ներքին երաժշտական կառուցվածքը: Տեղի է ունենում առիթմիա[6]. մարդը դառնում է մի թմբկահար, ով փորձում է միաժամանակ նվագել հարյուր տարբեր տեմպերով, ինչի արդյունքում առօրյան վերածվում է աղմուկի: Երբ կապիտալիստական և տեխնոլոգիական մեխանիկական գծայնությունը ճնշում է մարմնի բնական շրջափուլերը, ժամանակը խտանում և սեղմվում է, ինչն էլ մարդու մեջ առաջացնում է ժամանակային սովի զգացողություն: Ժամանակակից քաղաքակրթության մեծագույն պարադոքսն այն է, որ որքան շատ տեխնոլոգիաներ են ստեղծվում ժամանակը խնայելու համար, այնքան ավելի քիչ ժամանակ է մնում մարդուն սեփական կյանքն ապրելու համար: Եթե նախկինում մարդուց հսկայածավալ էներգիա և ժամանակ էր պահանջվում խոտը մանգաղով հնձելու, արտը եզներով վարելու, լվացքը ձեռքով կատարելու, հացը թոնրում թխելու համար, այսօր այդ ամենը մարդու փոխարեն կատարում է տեխնիկան՝ ազատելով նրան առօրյա կեցութային հոգսերից: Սակայն դրա հետ մեկտեղ այդ նույն տեխնոլոգիան կատարում է նաև ժամանակակեր գործառույթ: Մարդու ժամանակը ոչ թե ազատվում, այլ սեղմվում է՝ մարդուն դնելով անվերջանալի ու աննպատակ վազքի մեջ: «Ժամանակի չհերիքելը» հետարդիական առօրյայի վերջնական դատավճիռն է. մարդն անդադար արագություն է սպառում, բայց արդյունքում կորցնում է սեփական կյանքի իմաստավորված ընթացքը՝ վերածվելով ալգորիթմական ժամանակի կողմից կլանված հոգևոր դատարկության:

Չլինելով ո՛չ գծային, ոչ շրջափուլային՝ առօրյան այսօր կորցնում է նաև իր տարածաժամանակային զսպանակաձև հետագիծը: Այս մոդելում ժամանակը պտտվում է շրջանագծով (շրջափուլային), սակայն ամեն մի նոր պտույտի հետ տեղաշարժվում է առաջ կամ վերև (գծային)՝ արձանագրելով կրկնություն՝ որոշ

[6] Տե՛ս **Lefebvre, H.**, Éléments de rythmanalyse: Introduction à la connaissance des rythmes, Paris: Éditions Syllepse, 1992, էջ 15–40:

տարբերությամբ: Առօրյայում սա դրսևորվում է այն երևույթով, որ մարդը կարող է ամեն օր կատարել միևնույն սովորութային գործողությունները՝ սուրճ խմել նույն ժամին, քայլել նույն արահետով, սակայն նա այլևս նույնը չէ. ամեն մի նոր օղակի մեջ նա մտնում է հարստացված նախորդ օրվա հիշողությամբ, նոր էկզիստենցիալ փորձով և գիտակցության փոխված որակով: Հենց այս տարածաժամանակային չափման մեջ է, որ առօրեականությունը տաղտուկ կենցաղից վերածվում է կենսաշխարհի մեկնաբանման էկզիստենցիալ նախագծի: Զսպանակաձև կառուցվածքը ցույց է տալիս, որ առօրյան սոսկ մեխանիկական օրակարգ չէ, այլ անհատի կողմից սեփական կեցության անդադար նախագծումն ու վերաիմաստավորումը ժամանակի մեջ: Անցյալի կուտակված հենքի վրա անհատը յուրաքանչյուր նոր օրվա մեջ իրեն նետում է դեպի սեփական հնարավորությունների ապագան: Այս չափումը մոտ է Շյուցի այն հայեցակարգին, որ կենսաշխարհը պետք է դիտարկվի ոչ թե որպես պատրաստի տրվածք, այլ որպես անցյալի հուշերի և ապագայի պատկերացումների հիման վրա անհատի կողմից աշխարհի պատկերի անդադար կառուցման գործընթաց[7]:

Սակայն հետարդիական իրականությունը իր տեխնոլոգիական գերարագացմամբ և թվային փոխակերպումներով հարվածում է հենց այս էկզիստենցիալ զսպանակին՝ մեխանիկորեն սեղմելով ու փլուզելով այն: Ժամանակակից տեղեկատվական հեղեղի և սոցիալական մեդիայի գերարագ առցանց ռեժիմը խզում է անհատական ժամանակի ավանդական, ներդաշնակ կառուցվածքը՝ մարդուն դնելով մշտական հասանելիության (24/7) հարթակի վրա և լուծարելով իրականի ու վիրտուալի սահմանները: Այս գործընթացում զսպանակաձև ժամանակի վերամբարձ ընթացքը տեղի է տալիս, քանի որ լրահոսի ակնթարթային սլացքը կապիտալիզացնում է սոսկ վայրկենական նորության ձգտումը՝ սեղմելով փոխազդեցության ժամանակը և առաջացնելով հաղորդակցությունների ու իմաստների յուրօրինակ խզում: Այդպիսով՝ հետարդիականությունը կոտրում է էկզիստենցիալ զսպանակը, քանի որ գործունեության ժամանակը վերածվում է դիսկրետ պատառիկների, ինչն անհատին օտարում է ժամանակագրական տևողականությունից և զրկում սեփական կեցության վերաիմաստավորման ու ռեֆլեքսիայի համար անհրաժեշտ ժամանակային դադարներից, առանց որոնց ժամանակը շնչահեղձ է լինում: Անցյալի կուտակված հենքի և ապագայի հեռանկարի միջև եղած բնական կապի այս խզումը, որը ներկայում գտնվելու տևողության սեղմում է առաջացնում, անհամատեղելի է դարձնում կենսական փորձի տարածությունն ու ապագայի հեռանկարը: Զրկվելով իր զսպանակաձև դինամիկայից՝ առօրեականությունը դադարում է գործել որպես կենսաշխարհի մեկնաբանման էկզիստենցիալ նախագիծ, քանզի անհատն այլևս ունակ չէ սեփական անձը նետելու դեպի իմաստավորված, ինք-

[7] Տե՛ս **Schütz, A.**, The Phenomenology of the Social World (G. Walsh & F. Lehnert, Trans.), Evanston: Northwestern University Press, 1967, էջ 45–96:

նակերտ ապագա: Զսպանակի այսպիսի տրոհումը ժամանակը վերածում է իրարից անջատված «հիմա»-ների միապաղաղ ու կտրտված շարքի, որտեղ անընդհատ կրկնությունը ոչ թե որակական զարգացում է ապահովում, այլ ընկղմում է մարդուն կա՛մ դեպրեսիվ ստատիկայի (ժամանակի բացարձակ կանգի), կա՛մ մանիակալ քաոսի ախտաբանական տիրույթում՝ առօրյան վերջնականապես զրկելով իր գոյաբանական խորությունից և վերածվելով հեղհեղուկ ու անորոշ ունայնության:

Հետարդիական ունայնությունը տարբերվում է դասական դատարկությունից. այն քողարկված է սիմուլյակրների ավելցուկով և տեղեկատվական հեղեղով: Մ. Օժեի բնորոշած անդեմ «ոչ-տեղերը» և Ֆ. Ջեյմսոնի պատառիկավորված մտագար (շիզոֆրենիկ) ժամանակը ստեղծում են մի իրականություն, որտեղ անհատը մշտապես գործողության մեջ է, սակայն այդ գործողությունները զուրկ են նպատակային ու պատմողական կապից:

Փիլիսոփա Վալտեր Բենիամինը նկարագրում էր քաղաքային առօրյայի մի յուրահատուկ կերպար՝ ֆլանյորին՝ թափառաշրջիկին: Նա մարդ էր, ով անսպատակ քայլում էր փարիզյան փողոցներով, պատշգամբներով ու գեղեցիկ ճարտարապետական կամարների տակով՝ դանդաղ կլանելով քաղաքի տարածությունն ու պատմությունը[8]: Հետարդի առօրյայում ֆիզիկական թափառումը փոխարինվել է վիրտուալ սքրոլինգով (թվային թափառումով): Մենք այլևս չենք քայլում իրական ճարտարապետական միջավայրում կամ անտառային արահետներով՝ ժամանակը զգալու համար. մենք «թափառում ենք» էկրանի էջերով: Բայց եթե բենիամինյան ֆլանյորը տարածության մեջ գտնում էր իմաստ և պատմություն, ապա թվային ֆլանյորը հայտնվում է Մարկ Օժեի «ոչ-տեղերի» վիրտուալ լաբիրինթոսում, որտեղ ամեն ինչ նախագծված է սպառման, այլ ոչ թե էկզիստենցիալ հայեցողության համար: Ժամանակակից սմարթֆոնային առօրյայում էկրանի էջերով սահող «վիրտուալ» ֆլանյորը վերածվում է բաումանյան զբոսաշրջիկի[9]: Նա սպառում է իրականության մակերեսը՝ էկրանային տեսարանները վերածելով վաղանցիկ տպավորությունների հավաքածուի, որտեղ հիմնական նպատակը ձանձրույթից ու էկզիստենցիալ դատարկությունից փախչելն է:

Արագացված, վիրտուալացված և սպառողական կոդերով հագեցած այս առօրյան, իր ողջ արտաքին դինամիկայով հանդերձ, ներքուստ դատարկվում է: Մարդը հայտնվում է մի իրավիճակում, որտեղ տարածության ծավալունությունը վերածվում է վիրտուալ ոչնչության, իսկ ժամանակի անվերջանալի ակնթարթները՝ անպտուղ կրկնության, ինչն էլ հենց կազմում է հետարդիական առօրեականության ունայնության էությունը: Սակայն հեղհեղուկ արդիականության այս տիրույթը սոսկ զբոսաշրջային թեթևության ու անպարտավո-

[8] Տե՛ս **Benjamin, W.** The Arcades Project (H. Eiland & K. McLaughlin, Trans.), Cambridge, Mass.: Belknap Press of Harvard University Press, 1999, էջ 416–455:

[9] Տե՛ս **Bauman Z.,** Liquid Modernity. Cambridge: Polity Press, 200, էջ 91-129:

րության տոնախմբություն չէ. այն անմիջապես շրջվում է իր հակադիր՝ թափառաշրջիկի ողբերգական բևեռով: Երբ անհատը կորցնում է իր գոյաբանական անվտանգությունը ալգորիթմների և լրահոսների անսանձ հոսքում, նա վերածվում է էլեկտրոնային տիրույթի թափառաշրջիկի, ով, ի տարբերություն զբոսաշրջիկի, տեղաշարժվում է ոչ թե սեփական հաճույքի, այլ համակարգային անդիմադրելի ճնշման պատճառով: Նա դատապարտված է հավերժական, աննպատակ և անարմատ վիրտուալ թափառաշրջիկության՝ զրկված լինելով հաստատուն էկզիստենցիալ հենարանից հենց այն «ոչ-տեղերում», որոնք նախագծված են սպառման, այլ ոչ թե կեցության իմաստավորման համար:

Առօրյան, զուրկ լինելով կայուն սուբյեկտիվությունից, վերածվում է անդեմ, անանուն և չեզոք մի տիրույթի, որտեղ անհատը կորցնում է իր ինքնությունը և վերածվում ոմնի: Առօրյա ժամանակի միապաղաղությունը, որտեղ «ոչինչ տեղի չի ունենում», հետարդիականության մեջ քողարկվում է տեղեկատվական գերարագացմամբ: Սակայն էկրանային պատկերների անվերջ սահումը միայն խորացնում է «ոչ-իրադարձությունների» տիրապետությունը՝ առօրյա կյանքը վերածելով անպտուղ կրկնությունների շղթայի: Այսպիսով՝ Բլանշոյի միջոցով առօրեականության տարածաժամանակային տրոհումը ձեռք է բերում իր վերջնական էկզիստենցիալ ձևակերպումը՝ որպես մի իրականություն, որտեղ մարդը բնակվում է բացարձակ անորոշության և ունայնության մեջ[10]:

Առօրեականության տարածաժամանակային այս փոխակերպումը հետարդիական դիսկուրսում յուրովի վերակենդանացնում է աստվածաշնչյան հնագույն՝ «ունայնություն ունայնությանց» արքետիպը՝ հաղորդելով դրան տեխնոլոգիական և սպառողական բնույթ: Մարդը գտնվում է մշտական շարժման և տեղեկատվական արագընթացության մեջ, սակայն այդ արագությունը, զուրկ լինելով պատմական և էկզիստենցիալ հեռանկարից, հանգեցնում է ներքին դատարկության:

Առօրեականության հետարդիական տրոհման, գերարագացման և ներքին դատարկման այս բարդ փիլիսոփայական մեխանիզմը իր կատարյալ գրական-փոխաբերական արտահայտությունն է գտնում Օնորե դը Բալզակի «Շագրենի կաշին» վեպի արքետիպային սյուժեում[11]: Ժամանակակից սպառողական և թվայնացված տարածությունը, որտեղ անհատը գործում է որպես դելոզյան անսանձ «ցանկացող մեքենա»[12], վերածվել է յուրօրինակ վիրտուալ շագրենի կաշվի: Սմարթֆոնի էկրանի կամ հիպերիրական «ոչ-տեղերի» միջոցով առօրյան խոստանում է ցանկությունների և տեղեկատվության ակնթարթային, անսահմանափակ բավարարում: Սակայն, ինչպես շագրենի կաշվի պարագայում, այս

---

[10] Տե՛ս **Blanchot, M.**, Everyday Speech, trans. By S. Hanson, Yale French Studies, No. 73, New Haven: Yale University Press, 1987, էջ 12–20:

[11] **Բալզակ Օ՚ դը,** Շագրենի կաշին, Եր., Արմավ, 2020:

[12] Տե՛ս **Делез** Ж., **Гваттари Ф**., Анти-Эдип: Капитализм и шизофрения. Екатеринбург, 2007, էջ 24–34:

տեխնոլոգիական հագեցվածությունը գործում է կատարյալ պարադոքսով. ամեն մի ակնթարթային սպառում և վիրտուալ հաճույք սեղմում է էկզիստենցիալ ժամանակի տևողականությունը և փոշիացնում տարածքի իմաստային խորությունը: Որքան արագ է հետարդիական մարդը բավարարում իր տեղեկատվական ու սպառողական քաղցը, այնքան ավելի է կրճատվում նրա կեցության էկզիստենցիալ տարածությունը՝ առօրյան հանգեցնելով բլանշոյան անանունության և աստվածաշնչյան բացարձակ «ունայնություն ունայնությանց» վիճակին: Շագրենի կաշվի պես մաշվող այս առօրեականությունը դառնում է ժամանակակից մարդու գլխավոր էկզիստենցիալ ծոփորը:

Եթե դասական և ֆենոմենոլոգիական ավանդույթներում առօրյան և հավերժությունը մշտապես դիտարկվել են որպես դիալեկտիկական հակադրություններ, որտեղ հավերժությունը ներկայանում էր որպես անդրանցական, անփոփոխ և վեհ մի հարթություն, իսկ առօրյան՝ անցողիկության, պատահականության և մակերեսայնության տիրույթ, ապա հետարդի իրականության և տեխնոլոգիական գերարագացման պայմաններում այս ավանդական ստորակարգությունը ենթարկվում է արմատական շրջման, ինչի արդյունքում հավերժությունը դադարում է լինել վերպատմական մեծություն և հատվածականանալով ներբեռնվում ու փոշիանում է առօրյա ակնթարթների հարատև հոսքում: Այսօրվա անհատը ոչ թե ձգտում է դեպի հավերժություն, այլ դատապարտված է ապրելու սիմուլյատիվ հավերժության վերածված առօրեականության մեջ, որտեղ տարածության և ժամանակի ապակենտրոնացումը ծնում է մի նոր, յուրահատուկ կառուցվածքային վիճակ: Քանի որ հետարդիականությունում ամեն ինչ վերածվում է սիմուլյակրի՝ պատճենի՝ առանց բնօրինակի[13], նշաններն ու պատկերները դադարում են ենթարկվել մահվան և անցողիկության բնական օրենքներին: Թվային միջավայրում ստեղծված առօրյան կարող է վերարտադրվել և կրկնվել անվերջ, ինչը ծնում է «պլաստիկե հավերժության» պատրանք, որտեղ ամեն ինչ միշտ նույնն է՝ սմարթֆոնի էկրանի ալգորիթմներից մինչև սպառողական կոդեր:

Մտնելով մեծ սուպերմարկետ կամ օդանավակայանի տերմինալ՝ դուք հայտնվում եք միատեսակ լուսավորված, մշտական արհեստական ցերեկով գործող միջավայրում, որտեղ չկան տարվա եղանակներ կամ պատմական փոփոխություններ: Առօրյան այս «ոչ-տեղերում» դառնում է կայուն, անժամանակյա մի ներկա, որը յուրովի նմանակում է հավերժությունը:

«Հոսող արդիականությունը»[14] բացառում է ցանկացած հավերժություն, որովհետև ոչինչ չի կարող երկար կայուն մնալ: Եթե նախկինում մարդն իր առօրյա աշխատանքով կամ արվեստով փորձում էր կերտել մի բան, որը կմնա հավերժ (հուշարձան, գիրք, կայուն ընտանիք), ապա այսօր ամեն ինչ ստեղծվում է անմիջապես սպառվելու և դեն նետվելու համար: Առօրյան դառնում է

[13] Տե՛ս **Baudrillard, J.**, Simulacra and Simulation (S. F. Glaser, Trans.), Ann Arbor: University of Michigan Press, 1994:

[14] Տե՛ս **Бауман З.** Текучая современность. СПб., 2008, էջ 7-24:

«հակահավերժական»՝ հիմնված ժամանակավորության և փոփոխականության պաշտամունքի վրա:

«Հոսող արդիականության» պայմաններում առօրյա ժամանակը կորցնում է իր կոշտ, մեխանիկական և կառուցվածքային հենքը: Սալվադոր Դալիի «Հիշողության կայունությունը» կտավի հանրահայտ «հոսող ժամացույցները» հենց այդ ժամանակի որակական փոխակերպման կատարյալ սյուրռեալիստական պատկերումն են: Հոսող ժամացույցների նման, հետարդի ժամանակը դառնում է տձև, կպչուն և հեղուկացված՝ տարրալուծվելով վիրտուալ հոսքերի և ակնթարթների մեջ, որտեղ ոչ մի հարաբերություն կամ իմաստ չի կարողանում կարծրանալ ու կայունանալ: Այս ձևախեղված տարածաժամանակային միջավայրում անհատը կորցնում է գծային ժամանակի զգացողությունը: Օբյեկտիվ ժամանակի այս «մահը» և դրա վերածումը հոսող, սիմուլյատիվ հոսքի, վերջնականապես ամրագրում են հետարդի առօրեականության էկզիստենցիալ կացությունը՝ որպես մի հարատև, հալվող ունայնություն, որտեղ կեցության իմաստները խուսափում են ամրացումից:

Այս պայմաններում տեղի է ունենում նաև լուսանկարչական գեղագիտության փլուզումը: Լուսանկարչության մեծագույն վարպետ Անրի Կարտիե-Բրեսոնն ունի «վճռորոշ ակնթարթի» գաղափարը[15]: Դա այն միակ, անկրկնելի վայրկյանն է տարածության և ժամանակի մեջ, երբ իրադարձության իմաստն ու վիզուալ կոմպոզիցիան կատարելապես համընկնում են, և լուսանկարիչը որսում է հավերժությունը ակնթարթի մեջ:

Հետարդի սմարթֆոնային առօրյան, սակայն, սպանում է վճռորոշ ակնթարթը: Անվերջանալի լրահոսը, վիդեոմոնտաժի արագ տեմպերը, սոցցանցերի անվերջանալի հոլովակները, թվային մանիպուլյացիաները և միլիոնավոր պատահական կադրերը ջնջում են վայրկյանի էքզիստենցիալ եզակիությունը: Չկա այլևս ոչ մի վճռորոշ բան, կա միայն պատկերների անպտուղ հեղեղ, որտեղ ակնթարթը ոչ թե հավերժություն է որսում, այլ ընդգծում է ներքին դատարկությունը:

Որպես այս տարածաժամանակային քաոսի և էկզիստենցիալ տագնապի դեմ յուրօրինակ հոգեբանական պաշտպանություն՝ թվային հարթակների ներսում ձևավորվում են անհատական վարքագծի նոր ձևեր: Ժամանակակից անհատն իր առօրյա կյանքում սկսել է անդադար տեսողականացնել, լուսանկարել, կադրավորել և սոցիալական ցանցերում ցուցադրել իր կենցաղային օրակարգը՝ նախաճաշը, աշխատանքի, համալսարանի ճանապարհը, պատրաստած սնունդն ու զբոսանքի դրվագները: Սակայն, այս տեսողական արխիվացումը սոսկ մակերեսային նարցիսիզմի դրսևորում չէ, այլ ավելի խորքային գոյաբանական փնտրտուք: Երբ ներքին էկզիստենցիալ զսպանակը ջարդված է, իսկ ժամանակը տրոհված է իրարից անջատված ակնթարթների, մարդը

[15] Տե՛ս **Cartier-Bresson H.**, The Decisive Moment, New York: Simon & Shuster, 1952, էջ 1-4:

փորձում է կերտել արտաքին, օպտիկական զսպանակ: Կայուն մեդիասովորույթները վերածվում են յուրօրինակ հաստատուն կոդերի, որոնց միջոցով անհատը փորձում է օպտիկական համաձայնեցվածություն և կապակցվածություն հաղորդել իր կյանքի տրոհված և պատառիկացված ռիթմերին: Սոցիալական մեդիայի էջի թվային ժամանակագրությունը դառնում է այն արհեստական հարթակը, որտեղ անջատված «ներկաները» մեխանիկորեն կարվում են իրար՝ ստեղծելով շարունակականության և պատմողական ընթացքի պատրանք:

Այս թվային կադրավորումը միաժամանակ տարածության վերանվաճման յուրօրինակ փորձ է: Լուսանկարչական կամ կինեմատոգրաֆիական օպտիկայի կանոններով սեփական առօրյա միջավայրը (սենյակը, սեղանը, արահետը) կազմակերպելով՝ անհատը փորձում է հաղթահարել հետարդիական տեղահանվածության զգացումը: Տեսախցիկի կադրը ամրակայում է մարմնական տեղայնությունը՝ սովորական կենցաղային պատառիկին հաղորդելով էսթետիկական կշիռ և կայունություն: Մեդիասովորույթների միջոցով ստեղծված այս տեսողական կոդերը գործում են որպես սուբյեկտիվության արհեստական խարիսխներ: Սակայն այս մեխանիզմում կա խորը պարադոքս և էկզիստենցիալ թակարդ: Այն կապակցվածությունը, որին անհատը հասնում է այս կերպ, սահմանափակվում է սոսկ սիմուլյատիվ և էսթետիկական մակերեսով: Արտաքին, օպտիկական ամբողջականությունը չի վերականգնում ներքին էկզիստենցիալ տևողականությունը: Մինչ անհատը զբաղված է սեփական սովորութային օրակարգի կատարյալ տեսողական պատկերի կառուցմամբ, նրա իրական ժամանակը շարունակում է ենթարկվել դրոմոլոգիական գերարագացման: Արդյունքում՝ կյանքի էքզիստենցիալ նախագիծը փոխարինվում է դրա մեդիականացված սիմուլյակրով. մարդն ունենում է իր կյանքի կապակցված պատմության պատկերը, բայց զրկվում է այդ պատմությունն էկզիստենցիալ խորությամբ ապրելու հնարավորությունից: Մեդիասովորույթները հանդես են գալիս որպես անհատի վերջին հուսահատ ռազմավարական փորձը՝ պաշտպանելու իր կենսաշխարհի ամբողջականությունը հետարդիական «հոսող իրականության» համատարած ունայնության մեջ:

Ժամանակակից մարդն իր առօրյան նախագծում է ոչ թե ներսից դեպի դուրս՝ սեփական էկզիստենցիալ նախագծին համապատասխան, այլ դրսից դեպի ներս (թե ինչպես իր կյանքը կընկալվի էկրանի մյուս կողմում): Գործողության իմաստը տեղավորվում է դրա ավարտից հետո ընկած տիրույթ՝ թվային հարթակում հավանության արժանանալու պահը: Օբյեկտները վերածվում են սոսկ թատերական դեկորացիաների, որոնց միակ նպատակը տեսախցիկի հայացքը գոհացնելն է: Եթե գործողությունը հնարավոր չէ պատկերել, այն հետարդիական գիտակցության համար կորցնում է իր գրավչությունն ու արժեքը: Թվային իրականության մեջ ծնվում է մի երևույթ, որը կարելի է անվանել «կադրային առօրեականություն»: Այս չափման մեջ մարդկային վարքագիծն

առաջնորդվում է ոչ թե օբյեկտիվ, էկզիստենցիալ կամ կենսաբանական անհրաժեշտությամբ, այլ բացառապես պատկերի տեսողական հաջողվածությամբ: Անհատը պատրաստ է անել ամեն ինչ, ներդնել էներգիա, ժամանակ և ռեսուրսներ սոսկ այն բանի համար, որ տվյալ ակնթարթը կամ առարկան կադրում գեղեցիկ դիտվի: Այս երևույթը, անշուշտ, իր մեջ կրում է խորը գոյաբանական կեղծիք: Այսպիսով՝ տեղի է ունենում առօրյա կյանքի համատարած սիմուլյացիա. մարդն ապրում է ոչ թե իրականությունը, այլ իրականության կատարյալ պատկերը կերտելու տենդը: Այս գործընթացը վերջնականապես կազմաքանդում է ժամանակի էկզիստենցիալ զսպանակը: Քանի որ գործողությունները զուրկ են ներքին օրգանական անհրաժեշտությունից, դրանք չեն կարող վերածվել բնականոն կենսական փորձի: Մարդը ծախսում է իր առօրյա ժամանակը միայն նկարելու, կադրը գեղեցկացնելու և սոցիալական ցանցերում տեղադրելու վրա, ինչի հետևանքով ներկան դատարկվում է իր էկզիստենցիալ խտությունից: Առօրյան վերածվում է սիմուլյակրների մի հարթ ցուցափեղկի, որտեղ ամեն ինչ արտաքուստ գեղեցիկ է և կազմակերպված, բայց ներքուստ՝ անդամալուծված ու դատարկ, քանզի այդտեղ չկա ապրող, տևողական և անհատականացնող սուբյեկտ:

Փիլիսոփայական ավելի խորը մակարդակում այս երևույթը մարդու հոգևոր օտարման, ներքին սնանկության և գիտակցության ճգնաժամի ուղղակի ախտանիշն է: Կադրի կատարելության հետևից վազելը հոգեբանական փոխհատուցում է սեփական ներաշխարհի դատարկությունը քողարկելու համար: Երբ անհատը կորցնում է կապը հոգևոր և անդրանցական արժեքների հետ, նրա կեցությունը զրկվում է ներքին գոյաբանական հենարանից: Իմաստի ներքին դատարկությունը մարդուն ստիպում է խարիսխներ փնտրել արտաքին, նյութական ու տեսանելի աշխարհում: Քանի որ հոգին դատարկված է, անհատը փորձում է իր գոյության իմաստը լցնել արտաքին պատկերների, գեղեցիկ կադրերի և վիրտուալ հավանությունների միջոցով: Արտաքին փայլը վերածվում է ներքին սնանկությունը թաքցնող գեղագիտական դիմակի:

Կադրակենտրոն կյանքն ապացուցում է գիտակցության անկումային վիճակը, որտեղ անդրադարձը փոխարինվում է մեխանիկական հակազդումով: Բարձր գիտակցական մակարդակն անհատին մղում է դեպի ներս՝ սեփական կեցության և հոգևոր հասունացման խորքերը: Ցածր գիտակցական մակարդակում հայտնված մարդը, ընդհակառակը, ընդունակ չէ տանելու ներքին լռությունը, ձանձրույթն ու մենությունը: Նրան անդադար պետք է արտաքին էֆեկտների, պատկերների և ցուցադրությունների աղմուկը, որպեսզի չառերեսվի սեփական ներքին դատարկության տագնապի հետ: Ժամանակակից առօրյայում ամեն ինչ նկարելու և կադրում գեղեցիկ երևալու տենդը մարդկային հոգու աղաղակն է, որը, կորցնելով իր ներքին աստվածային ու հոգևոր հարթությունը, փորձում է ապացուցել իր գոյությունը մակերեսային պատկերների հեղեղի մեջ: Սակայն, որքան շատ է գեղեցկանում արտաքին կադրը, այնքան ավելի է խորանում

ներքին աշխարհի դատարկությունը՝ առօրյան վերջնականապես վերածելով հոգևորապես սնանկացած սուբյեկտների անժամանակ անապատի:

Հետարդիական թվային իրականությունը յուրօրինակ կերպով շրջում է ուայլդյան դասական պարադոքսը՝ ստեղծելով շրջված Դորիան Գրեյի երևույթը: Վեպում, ինչպես հայտնի է, Դորիան Գրեյը ֆիզիկապես պահպանում էր իր հավերժական անթերի գեղեցկությունն ու երիտասարդությունը, մինչդեռ նրա ներքին հոգևոր փլուզումը, բարոյական անկումն ու էկզիստենցիալ մաշվածությունը արտացոլվում էին թաքնված կտավի վրա: Դիմանկարն իր վրա էր վերցնում հոգու դեգրադացիայի ողջ ծանրությունը[16]:

Ժամանակակից մեդիա առօրյայում տեղի է ունենում ճիշտ հակառակը: Սոցիալական ցանցերում էջերը, ֆիլտրված լուսանկարը կամ խնամքով կադրավորված տեսանյութը վերածվում են հենց այդ անթերի, հավերժ երիտասարդ ու գեղեցիկ դիմանկարին, որն անհատը բացահայտ ցուցադրում է աշխարհին: Թվային հարթակներում կերտված կերպարը զուրկ է ճաքերից, տգեղությունից կամ անկումից: Այս կատարյալ թվային պատկերի ետևում թաքնված իրական մարդը՝ ապրող սուբյեկտը, սեփական ներաշխարհում կրում է հոգևոր սնանկության, ներքին դատարկության, ժամանակային սառեցման և գիտակցության անկման ողջ տրավման:

Եթե Ուայլդի մոտ իրական մարդն էր գեղեցիկ, իսկ կտավը՝ փտող, ապա հետարդիական առօրյայում թվային կտավն է կատարյալ, իսկ իրական մարդու հոգևոր տիրույթը՝ ամբողջությամբ դատարկված ու խեղված: Դորիան Գրեյի նման ժամանակակից անհատը պատրաստ է անել ամեն բան՝ հանուն այդ արտաքին պատկերի փայլի: Նա զոհաբերում է իր իրական, ապրված ժամանակի տևողականությունը և հոգևոր հասունացումը՝ հանուն կադրի ակնթարթային ու պատրաստի գեղագիտության: Սա կեցության բացարձակ արժեզրկումն է. պատկերը վերածվում է կենդանի ու արժեքավոր միավորի, մինչդեռ իրական ներաշխարհը ենթարկվում է իրական գոյաբանական քայքայման:

Հետարդիական «հիմա և անմիջապես»-ի բռնապետությունն ու հոգևոր դատարկությունը չեն սահմանափակվում միայն թվային էկրաններով կամ վիրտուալ կերպարներով: Այս երևույթն իր ամենաշոշափելի, կենսաբանական ու տրավմատիկ դրսևորումն է գտնում մարդու ֆիզիկական մարմնի և դեմքի փոխակերպման մեջ: Ժամանակակից աշխարհում պլաստիկ և էսթետիկ վիրահատությունների, բոտոքսի և ծերացման դեմ ուղղված արհեստական միջամտությունների համատարած տենդը փիլիսոփայական խորագույն մակարդակում ժամանակի ֆիզիկական նյութականացման դեմ պայքար է և պատմության էկզիստենցիալ ջնջում: Նախկինում մեր պապիկների և տատիկների դեմքերին նայելիս մենք տեսնում էինք մարմնավորված պատմություն: Ծերացող դեմքի յուրաքանչյուր կնճիռ, աչքերի շուրջ ձևավորված յուրաքանչյուր գիծ վերացական թերություն չէր, այլ կյանքի տևողականության նյութական

[16] Տե՛ս **Wilde O.**, The Picture of Dorian Gray, London: Penguin Books, 2003:

նստվածքը: Դրանց մեջ կոդավորված էին ապրված կյանքը, ուրախությունները, կորուստները, ծնունդներն ու հոգևոր հասունացման ցավոտ, բայց անհատականացնող ընթացքը: Տատիկների դեմքը ժամանակի զսպանակաձև մոդելի կատարյալ հայելին էր. օրերի կրկնվող շրջափուլերը (տառապանքն ու աշխատանքը) տարիների ընթացքում նստում էին մաշկի վրա՝ ձևավորելով մի ուրույն պատմություն: Այդ դեմքին նայելիս ակնհայտ էր դառնում, որ մարդն ապրել է. դեմքն ուներ գոյաբանական կշիռ, քանի որ այն ներաշխարհի և արտաքին ժամանակի հանդիպման անձեռնմխելի կտավն էր:

Հետարդիական գիտակցությունը, տառապելով ներքին դատարկությամբ և հոգևոր սնանկությամբ, չի հանդուրժում ժամանակի այս ֆիզիկական հետքերը: Տարիքը փոքրացնելու, կնճիռները բռնի կերպով վերացնելու և դեմքը պլաստիկ վիրահատությունների միջոցով ստանդարտացնելու մոլուցքը ոչ այլ ինչ է, քան մարմնի ժամանակային «ախտահանում»: Արդյունքում՝ մարդկային դեմքը կորցնում է իր ֆենոմենոլոգիական խորությունն ու մարմնական անհատականությունը: Այն վերածվում է անփայլ պլաստիկի կամ ապակու նաման մի հարթ մակերեսի, որը չի ծերանում, չի փոխվում և չի արտացոլում ժամանակի հոսքը: Փորձելով կանգնեցնել գծային ժամանակը և մնալ հավերժական ներկայի տիրույթում՝ մարդը խեղում է իր կեցության էկզիստենցիալ զսպանակը: Նա ստանում է անժամանակ և անպատմություն մի դեմք, որին նայելիս այլևս հնարավոր չէ տեսնել մարդկային հոգու խորությունն ու ապրված կյանքի սրբազան տևողությունը:

Առօրյա տարաձաժամանակային կառուցվածքների տրոհումն ու հոգևոր դատարկումն իրենց արտահայտությունն են գտնում նաև արվեստում: Դարեր շարունակ արվեստի գործի օնտոլոգիական առաքելությունը հաղթանակն էր ժամանակի անցողիկության նկատմամբ: Դասական արվեստը ձգտում էր դեպի հավերժություն և մոնումենտալություն. քանդակը, կտավը, ճարտարապետական կոթողը նախագծվում էին դիմակայելու համար դարերին: Դրանք գործում էին որպես պատմական հիշողության պահեստարաններ՝ ձգելով ժամանակի էկզիստենցիալ զսպանակը և կամրջելով անցյալի ժառանգությունը ապագա սերունդների հեռանկարի հետ: Հետարդիականության և թվային դարաշրջանի մշակույթում, սակայն, արվեստը հրաժարվում է հավերժության իր այս հավակնությունից: Ժամանակակից արվեստի առաջատար ձևերը՝ ինստալյացիաները, փերֆորմանսները, հեփենինգները, թվային արվեստը (NTF) և նույնիսկ ինքնաոչնչացվող գործերը (օրինակ՝ Բենքսիի՝ աճուրդի պահին կտրատվող կտավը), սկզբունքորեն նախագծված են որպես հարատևությունից զուրկ, անցողիկ երևույթներ: Ժամանակակից արվեստի գործն այլևս օբյեկտ չէ, որը կարելի է պահպանել թանգարանում դարերով: Այն վերածվում է իրադարձության, որը գոյություն ունի միայն տվյալ վայրկյանին, տվյալ իրադարձության մեջ: Օրինակ՝ ինստալյացիան հավաքվում է մի քանի օրով և ապամոնտաժվում՝ չթողնելով ֆիզիկական հետք: Արվեստը դադարում է լինել

տևողականության մարմնավորում: Այն չի ձգտում կուտակվել անհատի հոգևոր խորքում, այլ գործում է՝ որպես ակնթարթային ցնցում, գեղագիտական ազդակ, որը պետք է սպառվի հիմա և անմիջապես: Քանի որ ժամանակակից գիտակցությունն ունակ չէ տանելու տևողականությունը, հասունացումն ու խորքային ռեֆլեքսիան, նրան անհրաժեշտ է մի արվեստ, որը կհամապատասխանի իր կտրտված, պատառիկացված ուշադրությանը:

Արվեստն այլևս չի փրկում մարդուն առօրյա ունայնությունից, այլ ինքն է վերածվում այդ անժամանակ, հեղհեղուկ ու անցողիկ ունայնության գեղագիտական շարունակությանը: Երբ մշակույթն ու արվեստը հրաժարվում են հավերժության հորիզոնից և սառչում են վայրկենականության մակերեսին, անհատը զրկվում է իր կեցությունը պատմականորեն և անդրանցական կերպով նախագծելու վերջին հոգևոր գործիքից:

Այսպիսով՝ տարածության և ժամանակի ապակենտրոնացման պայմաններում առօրյան դադարում է լինել պարզապես կյանքի ավտոմատացված հարթակ. այն վերածվում է էկզիստենցիալ բարդ նախագծի, որտեղ անհատից պահանջվում է գիտակցված ջանք՝ սեփական կենսաշխարհի փլատակների միջից սուբյեկտիվության կայուն կղզյակներ կերտելու համար:

АРПИНЕ АЙВАЗЯН – *Постмодернистская внепространственность и вневременность: утраченные якоря повседневного бытия.*– В статье исследуется радикальное экзистенциальное расщепление повседневного пространства и времени под влиянием постмодернистской цифровизации и технологического сверхускорения. Укорененность традиционного жизненного мира, обеспечивавшая онтологическое основание и внутреннюю длительность личности, в современной реальности сменяется виртуализацией, безликими транзитными зонами и фрагментированным «шизофреническим» временем. Исследование глубоко раскрывает, как крах гармоничной пространственно-временной пружины порождает феномен «кадроцентричной жизни», где индивид вместо осмысленного проживания реальности лихорадочно потребляет ее симулятивный, экранный образ. В этом контексте анализируются трансформация классического городского наблюдателя в поверхностного туриста или бездомного бродягу, создание безупречной эстетической маски в цифровой среде за счет внутреннего духовного банкротства, а также временная дезинфекция тела и саморазрушающаяся эфемерность искусства. Показывается, что технологическая скорость опустошает экзистенциальную плотность решающего мгновения, превращая повседневность в текучую и неопределенную суету. В заключении отмечается, что в этом пространственно-временном хаосе повседневность превращается в сложный экзистенциальный проект, требующий осознанных усилий для создания устойчивых островков субъективности и якорей идентичности среди руин собственного жизненного мира.

Ключевые слова: *повседневность, постмодерн, время, пространство, экзистенциальное расщепление, виртуализация, вечность, текучая современность, кадроцентричная повседневность, жизненный мир*

ARPINE AYVAZYAN – *Postmodern Deterritorialization and Extratemporality: the Lost Anchors of Everyday Existence.*– The article examines the radical existential fragmentation of everyday space and time driven by postmodern digitalization and hyper-acceleration. The anchoring of the traditional lifeworld, which once ensured ontological grounding and inner duration, is replaced by virtualization, anonymous transient spaces, and a fragmented,

"schizophrenic" time. The study profoundly reveals how the collapse of the harmonious spatio-temporal spring gives rise to a "frame-centered life," where the individual feverishly consumes a simulative, screen-based image instead of living reality meaningfully. Within this framework, the paper analyzes the transformation of the classic urban observer into a superficial tourist or rootless vagabond, the creation of a flawless digital mask at the expense of inner spiritual bankruptcy, the temporal disinfection of the body, and the self-destructive ephemeralization of art. It demonstrates that technological speed drains the existential density of the decisive moment, turning the everyday into liquid vanity. Ultimately, the everyday transforms into a complex existential project requiring a conscious effort to construct stable islands of subjectivity and identity anchors amidst the ruins of the lifeworld.

Key words: *everyday life, postmodernity, time, space, virtualization, eternity, liquid modernity, frame-centered everyday life, lifeworld*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները։

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ։

Օգտագործված գրականություն/References

Բալզակ Օ. դը, Շագրենի կաշին, Եր., Արմավ, 2020-Balzak O. de, Shagreni kashin, Armav, 2020.

Հարությունյան Է., Համատեքստի հերթափոխը. մարդկային կեցության սոցիոմշակութային այլատեսակությունների ապականումը // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 7(1), 2016:

Սողոմոնյան Գ., Անհապաղը որպես արդիականության կառուցարկման սոցիոմշակութային ֆենոմոն // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 4(1):

Бауман З. Текучая современность. СПб., 2008-Bauman Z., Tekuchaya sovremennost', SPb., 2008.

Делез Ж., Гваттари Ф. Анти-Эдип: Капитализм и шизофрения. Екатеринбург, 2007-Delez Zh., Gvattari F., Anti-Edip: Kapitalizm i shizofreniya, Ekaterinburg, 2007.

Augé M., Non-Places: Introduction to an Anthropology of Supermodernity, translated by J. Howe, London, New York: Verso, 1995.

Baudrillard, J., Simulacra and Simulation (S. F. Glaser, Trans.), Ann Arbor: University of Michigan Press.

Bauman Z., Liquid Modernity, Cambridge: Polity Press, 2000.

Benjamin, W., The Arcades Project (H. Eiland & K. McLaughlin, Trans.), Cambridge, Mass.: Belknap Press of Harvard University Press, 1999.

Blanchot, M., Everyday Speech, trans. by S. Hanson, Yale French Studies, No. 73, New Haven: Yale University Press, 1987.

Cartier-Bresson H., The Decisive Moment, New York: Simon & Shuster, 1952.

Jameson, F., Postmodernism, or, The Cultural Logic of Late Capitalism, Durham: Duke University Press, 1991.

Lefebvre, H., Éléments de rythmanalyse: Introduction à la connaissance des rythmes, Paris: Éditions Syllepse, 1992.

Schütz, A., The Phenomenology of the Social World (G. Walsh & F. Lehnert, Trans.), Evanston: Northwestern University Press, 1967.

Virilio, P., Vitesse et Politique: essai de dromologie, Paris: Éditions Galilée, 1977.

Wilde O., The Picture of Dorian Gray, London: Penguin Books, 2003.